

Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մենդի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	10
R&D	13
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	14
Կոսմետիկա.....	16
Առողջապահություն	17
Այլ ոլորտներ	19
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	22
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	24

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Ջեմեր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է առևտրային գործընկերներ՝ առևտրային գործակալության և/կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Լեհական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է օրգանական մրգերից ստացված սննդամթերքի, ինչպես օրինակ՝ ջեմերի, արտադրության ոլորտում, փնտրում է գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ արտերկրում՝ իրենց արտադրանքն այդ երկրներում ներկայացնելու և/կամ վաճառելու համար: Ընկերությունը փորձ ունի իր ապրանքների արտահանման վաճառքի ոլորտում: Համագործակցությունը կլինի առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20181025002

Պորտուգալական ընկերությունը, որը զբաղվում է սննդի, խմիչքների և ապրանքների գլոբալ առևտրով, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Պորտուգալական ՓՄՁ-ն, որը հիմնադրվել է 1987 թվականին, ողջ աշխարհում ներմուծում և արտահանում է սնունդ, խմիչքներ, ապրանքներ և գյուղատնտեսական ապրանքներ, գտնվում է Պորտուգալիայի Սենտրո կոչվող տարածաշրջանում և ունի նաև ներկայացուցչական գրասենյակներ Լուանդայում և Անգոլայում: Պորտուգալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ, ովքեր

հետաքրքրված են տարածման և առևտրային ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BOPT20181009001

Պորտուգալական ընկերությունը, որը զբաղվում է ջեմերի և այլ մրգային ապրանքների մարքեթինգով և արտադրությամբ, փնտրում է գործընկերներ՝ վաճառելու համար իր ապրանքներն արտերկրում առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Պորտուգալական ընկերությունը Մադեիրա կղզուց, որը զբաղվում է ջեմերի և մրգային ապրանքների արտադրության և առևտրայնացման ոլորտում, այդ թվում՝ ջեմեր, մրգային հյութերի պարկուճներ, չափնի և շոկոլադներ մրգերից, տոմարիլլոյից, պիտանգայից, մանգոյից, պապայայից, բանանից և այլ մրգերից, փնտրում է գործընկերներ՝ իր արտադրանքն առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո վաճառելու համար:

Ծածկագիր. BOPT20181004001

Մակեդոնական ընկերությունը, որը գործում է բանջարեղենների և մրգերի մեծածախ վաճառքի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ

Մակեդոնական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական ապրանքների մեծածախ վաճառքում, փնտրում է պահածոներ և բանջարեղեններ: Ընկերությունը հետաքրքրված է տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BOMK20180926001

Երիտասարդ, կրեատիվ գարեջրատունը, որը գտնվում է Բրյուսելում, փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր ձեռագործ գարեջուրը աշխարհում տարածելու նպատակով

Սա համատեղ ծրագիր է, որի նպատակն է համատեղ ջանքերով դառնալ ավելի նորարարական և դիվերսիֆիկացնել բելգիական ձեռագործ գարեջրի տեսականին: 2 տարվա մեջ ընկերության գարեջուրն արդեն հնարավոր էր գտնել Բրյուսելի ավելի քան 150 բարերում/ռեստորաններում/խանութներում, ինչպես նաև շուրջ 20 երկրներում: Իրենց նոր քաղաքային գարեջրատնով, որը տեղակայված է Բրյուսելում, ընկերությունը նպատակ ունի ստեղծել առավել նորարարական գարեջրատներ՝ մոտ 30 բաղադրատոմսերով և տարեկան 750.000 շիշ արտադրանքով, որի համար ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOBE20180809002

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է հրուշակեղենի արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական հրուշակեղենի արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ հալվա, մեդրից և ընկուզեղենից խորտիկներ, տարբեր քաղցրեղեններ և դրաժեներ, հետաքրքրված է իր աշխարհագրական գործունեության ընդլայնմամբ և, այդպիսով, փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո երկարատև համագործակցության նպատակով:

Ծածկագիր. BOUA20181009003



Ծովային ծագում ունեցող գյուղատնտեսական և սննդային բնական ակտիվ բաղադրիչներ արտադրող ֆրանսիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆրանսիական ընկերությունը, որը գործում է ծովային կալցիումի և ձկնամթերքի համային տեսականու կենսատեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ, որպեսզի վաճառի մարդկանց սպառման համար նախատեսված բնական ծովային բաղադրիչները: Ծովային կալցիումը կարող է կիրառվել սննդային հավելումների մեջ՝ նպաստելով ոսկրերի և հոդերի առողջությանը, դիետիկ սննդի և ըմպելիքների մեջ՝ կալցիումի հավելման համար, ձկնամթերքի համերի մեջ, ներառյալ՝ ձողաձկան փոշի, սպուրների մեջ, անուշաբույր հիմնանյութերում, պատրաստի ուտեստներում և խմիչքների մեջ: Ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ պոտենցիալ գործընկերներին Եվրոպայից, Ասիայից, ԱՄՆ-ից և Կանադայից:

Ծածկագիր. BOFR20181030001



Գործարար համագործակցության հարցումներ

Թայվանյան ընկերությունը փնտրում է եվրոպական խորտիկներ և խմիչքներ արտադրողներ և մատակարարներ տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Թայվանյան ընկերությունը, որը մասնագիտացած է սննդի առևտրում, փնտրում է ժամանցում կիրառվող սնունդ արտադրողներ կամ մատակարարներ: Ընկերությունը փնտրում է հետևյալ արտադրատեսակները՝ շոկոլադ, քաղցրավենիք, թխվածքաբլիթներ, չիպսեր, խմիչքներ և այլն: Ընկերությունը Եվրոպայում փնտրում է երկարատև համագործակցություն՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո: Այն ունի սերտ կապեր Թայվանի օնլայն և մանրածախ վաճառակետերի հետ:

Ծածկագիր. BRTW20180907001

Մննդի ոլորտում գործող լեհական ընկերությունը փնտրում է ընկուզեղենի, կորիզների և չրերի մատակարարներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է ընկուզեղենի, կորիզների և չրերի մատակարարման ոլորտում՝ նախատեսված B&B, HoReCa ոլորտների համար, ցանկանում է հաստատել համագործակցության համաձայնագրեր վերը նշված սննդատեսակների նոր արտադրողների/մատակարարների հետ:

Ծածկագիր. BRPL20181106001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Կոշիկ և կոշիկի մասեր արտադրող ուկրաինական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման կամ առևտրային գործակալության ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձրորակ և հարմար կոշիկների և դրանց մասերի արտադրության ոլորտում՝ կանանց և տղամարդկանց համար կոշիկներ, ձմեռային, գարնանային-աշնանային և ամառային, ցանկանում է ընդլայնել իր գործունեությունը աշխարհագրայնորեն և փնտրում է նոր շուկաներ իր արտադրանքի համար: Ընկերությունը հետաքրքրված է տարածման կամ առևտրային ծառայությունների համաձայնագրերի ներքո երկարատև համագործակցությամբ :

Ծածկագիր. BOUA20181010001



Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է հյուսված պարաններ, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Սա առաջատար ընկերություն է, որն արտադրում և տարածում է տարբեր տիպի հյուսած պարաններ Բուլղարիայում: Ընկերությունն արտադրում է մեկ կամ երկու հյուսով արված պարաններ սինթետիկ (պոլիամիդ 6, պոլիէսթեր մետաքս և տեքստիլ պոլիէսթերից) և բնական նյութերից (ջուտ): Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ առևտրային գործակալներ՝ նոր շուկաներ մուտք գործելու նպատակով:

Ծածկագիր. BOBG20181023001

Կաշվե գոտիներ արտադրող ուկրաինական ընկերությունը փնտրում է տարածման ծառայություններ և արտադրական համաձայնագրեր:

Ուկրաինական ընկերությունը, որն արտադրում է կաշվե գոտիներ, փնտրում է համագործակցություն՝ տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրերի ներքո: Ընկերությունն առաջարկում է արտադրական հնարավորություններ կանանց և տղամարդկանց կաշվե գոտիների արտադրության ոլորտում: Ընկերությունը կարող է արտադրել մեծ և փոքր ծավալներով: Ի հավելումն, ընկերությունը փնտրում է փորձ և

գիտելիքներ ունեցող դիստրիբյուտորներ օտարերկրյա շուկաներում:

Ծածկագիր. BOUA20181101010

**Բնական բրդից և բամբակից տեքստիլ արտադրող ֆիննական ընկերությունը, որի կապիտալը
Լիտվայում է, առաջարկում է առևտրի միջնորդավորված, արտադրական և
ենթապայմանագրային համաձայնագրեր**

Բնական բրդից և բամբակից վերնակներ և ծածկոցներ արտադրող ընկերությունն առաջարկում է մի շարք ծառայություններ՝ արտադրական, դիզայներական, լոգիստիկ: Ընկերությունը հետաքրքրված է զարգացնել իր բիզնեսը՝ առևտրային գործակալության կամ արտադրական համաձայնագրերի ներքո և կարող է հանդես գալ իբրև ենթակապալառու առաջադեմ և լավ զարգացող տնտեսություններում:

Ծածկագիր. BOLT20171115001

**Բնական բրդից և բամբակից տեքստիլ արտադրող ֆիննական ընկերությունը, որի կապիտալը
Լիտվայում է, առաջարկում է առևտրի միջնորդավորված, արտադրական և
ենթապայմանագրային համաձայնագրեր**

Բնական բրդից և բամբակից վերնակներ և ծածկոցներ արտադրող ընկերությունն առաջարկում է մի շարք ծառայություններ՝ արտադրական, դիզայներական, լոգիստիկ: Ընկերությունը հետաքրքրված է զարգացնել իր բիզնեսը՝ առևտրային գործակալության կամ արտադրական համաձայնագրերի ներքո և կարող է հանդես գալ իբրև ենթակապալառու առաջադեմ և լավ զարգացող տնտեսություններում:

Ծածկագիր. BOLT20171115001

**Լեհական ընկերությունը, որն արտադրում է պայուսակներ, դրամապանակներ, կլատչներ,
պորտֆելներ, գոտիներ և կաշվե իրեր, ցանկանում է հաստատել միջազգային
համագործակցություն**

Կաշվե իրերի ոլորտում գործող լեհական գործարանը փնտրում է համագործակցություն առևտրային գործակալության, ենթապայմանագրային կամ աուստրսինգային համաձայնագրերի ներքո: Ընկերությունն առաջարկում է իր արտադրական կարողությունները՝ կանանց և տղամարդկանց կաշվե պայուսակների, աքսեսուարների լայն տեսականու ոլորտում: Ընկերությունը կարող է արտադրել մեծ և փոքր ծավալներով՝ համաձայն պոտենցիալ հաճախորդի կողմից ներկայացված ծրագրի: Ավելին, ընկերությունը փնտրում է փորձ և գիտելիքներ ունեցող ներկայացուցիչներ օտարերկրյա շուկայում:

Ծածկագիր. BOPL20181001004



Կանանց համար նախատեսված պայուսակներ արտադրող պոլվենական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ

Կաշվե իրեր արտադրող ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ: Ընկերությունն առաջարկում է ձեռագործ կաշվե իրերի լայն տեսականի: Ընկերության ուժեղ կողմերն են՝ դիզայնը, արհեստավարժությունը, բարձր որակը և արագ արձագանքելը: Բոլոր նյութերը 100 % ԵՄ ծագում ունեն:

Ծածկագիր. BOSI20170725004



Գործարար համագործակցության հարցումներ

A French clothing designer is looking for fabric manufacturers or retailers

A French West Indies designer and distributor of clothing and accessories for women wishes to establish cooperation with fabric manufacturers or retailers under a manufacturing agreement.

Հոլանդական ջրային սպորտաձևերի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է հիդրոհագուստ արտադրողներ

Հոլանդական ընկերությունը, որը գործում է եվրոպական նորաձևության ոլորտում և մասնագիտացած է ջրային սպորտաձևերի համար նախատեսված հագուստների ոլորտում, ցանկանում է ստեղծել իր նոր հավաքածուն իր դիզայնով և մշակմամբ: Ընկերությունն այժմ փնտրում է նեոպրենային գործվածք արտադրող: Ընկերությունը փնտրում է հնարավոր գործընկեր, ով կարող է արտադրական համաձայնագրերի ներքո արտադրել և պատվերով տպագրել նեոպրենից հագուստ:

Ծածկագիր. BRNL20180703001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ռումինական ընկերությունը, որը նախագծում և իրականացնում է էլեկտրականության, գազի, մալուխների և հեռախոսային ցանցերի աշխատանքներ, առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն

Այս ընկերությունը մասնավոր, սահմանափակ ռումինական ընկերություն է, որը տեղակայված է Տրանսիլվանիայում և գործում է շինարարության ոլորտում: Ընկերության հիմնական գործունեությունը ցանցերի նախագծումն ու էլեկտրականության, գազի, մալուխների և հեռախոսային ցանցերի և այլ աշխատանքների իրականացումն է, ինչպես նաև հասարակական և ոչ հասարակական շինությունների կառուցումը: Ընկերությունը

ցանկանում է տրամադրել ծառայություններ արտերկրում և ցանկանում է համագործակցել վերը նշված ոլորտներում՝ ենթապայմանագրային համագործակցության ներքո:

Ծածկագիր. BORO20181022001

Լիտվական ընկերությունը, որն արտադրում է սրբիչի չորանոց չժանգոտող պողպատից, փնտրում է առևտրի միջնորդներ

Լիտվական ընկերությունը, որն ավելի քան 15 տարվա փորձ ունի չժանգոտող պողպատից սրբիչների չորանոցների արտադրության ոլորտում, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ: Ընկերության տեսականին բաղկացած է՝ պատրաստի և պատվերով արվող (չափ և դիզայն) չժանգոտող պողպատից, գալարած, էլեկտրական սրբիչների չորանոցներից:

Ծածկագիր. BOLT20170609002



Արևից պաշտպանական համակարգեր արտադրող սլովենական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Առաջատար սլովենական ընկերությունը, որն արտադրում է արևային և էքստերիերում ու ինտերիերում կիրառվող տեսողական պաշտպանական համակարգեր, փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ՝ իր ապրանքների և ծառայությունների համար: Ապրանքները շատ բարձր որակ ունեն և տրամադրում են ճկուն և բարձր էֆեկտիվություն ունեցող արևապաշտպան լուծումներ: Ընկերությունն առաջարկում է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOSI20180621002

Լեհական ընկերությունը, որը փնտրում է ճանապարհային չորանոցներ, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ (գործակալներ կամ դիստրիբյուտորներ):

Լեհական ՓՄՁ-ն, որն արտադրում է ճանապարհային չորանոցներ, որոնք շատ օգտակար են, երբ ճանապարհների մակերեսները շատ թաց են և ճանապարհային գծանշումներ է անհրաժեշտ կատարել: Ընկերությունը ցանկանում է կապ հաստատել պոտենցիալ գործընկերների հետ: Ավելին, ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ՝ գործակալների կամ դիստրիբյուտորների միջոցով:

Թուրքական ընկերությունը, որն արտադրում է փողոցները լուսավորող սյուներ, փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում

Թուրքական ընկերությունը, որն արտադրում է դեկորատիվ և կոնաձև խողովակներ դրսի լուսավորման համար, նաև՝ արևային էլեկտրակայանների համար հենված խողովակներ և ենթակառուցվածքային տարրեր, պտուտակային հենասյուներ, փնտրում է դիստրիբյուտորներ՝ Եվրոպայում նոր շուկաներ մուտք գործելու նպատակով: Ընկերությունն առաջարկում է ապրանքների լայն տեսականի և ունի նոու-հաու՝ հաճախորդի պահանջով նոր ապրանքները նախագծելու համար:

Ծածկագիր. BOTR20180627001

Պլաստմասսայի և ստվարաթղթե թափոնների համար նախատեսված ավտոմատ վերելակներ ու փոխադրամիջոցներ արտադրող սլովենական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Սլովենական ընկերությունը, որը գործում է թղթի թափոնների, ստվարաթղթի փաթեթավորման և պլաստմասսայի տեսակավորման համար նախատեսված սարքավորումների արտադրության ոլորտում, փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր: Ընկերությունը 20 տարվա փորձ ունի, ճկուն է, ունի լայն տեսականի, և կարող է աջակցություն ցուցաբերել իր հաճախորդների կարիքների համար համապատասխան սարքավորումների ընտրության հարցում:

Ծածկագիր. BOSI20171020002



Գործարար համագործակցության հարցումներ

Բելգիական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղի գոդման և շինարարական աշխատանքների ոլորտում, փնտրում է արտադրողներ

Բելգիական ընկերությունը, որը նախագծում և արտադրում է բարձրորակ մետաղական կոնստրուկցիաներ, ունի արտադրական լայն տեսականի (աստիճաններ, ռելսեր, (ավտոմատացված) դարպասներ, ցանկապատեր, ...) և արտադրում է ընկերությունների և անհանտների համար: Ընկերությունը ցանկանում է գտնել գործընկերներ, ովքեր կարող են

արտադրել բեկփական ընկերության տրված դիզայնով իրենց հաճախորդների համար՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRBE20181005001

Պորտուգալական ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկեր, որոնք մասնագիտացած են կայուն և արդյունավետ շինանյութերի, սարքավորումների և ծառայությունների ոլորտում.

Պորտուգալական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարական և վերականգնողական ծառայությունների ոլորտներում, փնտրում է կայուն շինանյութեր և սարքավորումներ՝ փայտե տների, վերականգնվող էներգիայի, էկո շինանյութերի նոր մատակարարներ՝ 100%-անոց կայուն շինարարական նախագծեր իրագործելու համար: Ընկերությունը նաև փնտրում է ճարտարապետական հատուկ ծառայություններ NZEB (գրո արդյունավետությամբ շինության կողքին) կամ Պասսիվ հաուս ստանդարտով: Ընկերությունը հետաքրքրված է առևտրային կամ ենթապայմանագրային ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BRPT20170529001

R&D



[EUREKA/Eurostars2] Գործընկերներ են որոնվում երթուղիների հսկողության տեխնոլոգիայի համար

Կորեական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ EUREKA/Eurostar2 ծրագրի առաջարկի ներքո համագործակցելու համար: Նպատակն է՝ մշակել դոպլեր ռադիոտեղորոշիչի սենսորների օգտագործմամբ կենսական նշանների հայտնաբերման և երթուղիներին հետևելու տեխնոլոգիա, և ընկերությունը հետաքրքրված է դրսից տեխնոլոգիայի հարմարեցմամբ: Գործընկերները կարող են լինել ընկերություններ կամ հետազոտական ինստիտուտներ, որոնք մասնագիտացած են կենսական նշանների և երթուղիների տեխնոլոգիաների հսկողության

Eurostars2. Լցնող տեխնոլոգիա գեղեցկության ոլորտի և բժշկական կիրառության համար

Կորեական ՓՄՁ-ն, որը հետազոտական վենչուրային ձեռնարկություն է, փնտրում է գործընկերներ՝ Eurostars2 ծրագրի առաջարկի ներքո համագործակցելու նպատակով: Ծրագրի նպատակն է մշակել Լցնող տեխնոլոգիա՝ գեղեցկության ոլորտի և բժշկական կիրառության համար: ՓՄՁ-ն փնտրում է ընկերություններ, համալսարաններ կամ հետազոտական ինստիտուտներ, որոնք մասնագիտացած են այդ Լցնող պարագաներում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Իտալական սփին-օֆ ընկերությունն առաջարկում է նորարարական ամառք տվյալների հարթակ՝ համատեղ ձեռնարկության կամ լիցենզային համաձայնագրի ներքո:

Իտալական սփին-օֆ ընկերությունը, որը գործում է տվյալների վերլուծության և արհեստական ինտելեկտի համար սեմանտիկ տեխնոլոգիաների մշակման ոլորտում, մշակել է նորարարական հարթակ՝ հասկանալու համար մեծ բարդ տվյալներ՝ սկսած կառուցվածք ունեցող և կառուցվածք չունեցող աղբյուրներից (վեբ, սոցիալական, տեքստային)՝ ընկերություններին տրամադրելով կրիտիկական կարևոր գաղափարներն առավել արագ, տեղեկացված որոշումներով և արդյունավետ գործողություններով իրականացնելու հնարավորություն: Ընկերությունը փնտրում է համակարգային ինտեգրատորներ և SS պրոֆեսիոնալներ՝ լիցենզային կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրեր ստորագրելու

նպատակով:

Ծածկագիր. BOIT20171107002

Լեհական SS ընկերությունը, որը մասնագիտացած է ծրագրերի մշակման և ձեռնարկատիրական ինտեգրացման ոլորտում, առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն

Ընկերությունը Լեհաստանի հարավից, մասնագիտացած է ձեռնարկատիրական ինտեգրացման ոլորտում: Ընկերությունը հիմնականում հետաքրքրված է վեբ ծառայությունների և վեբ ծրագրերի մշակման ոլորտում: Ընկերությունը փնտրում է երկարատև համագործակցություն իբրև ենթակապալառու՝ պահանջվող SS ծրագրերի համար:

Ծածկագիր. BOPL20171012001

SS ծրագրերի ոլորտում գործող լեհական ընկերությունը փնտրում է գործակալներ

Փորձ ունեցող և դինամիկ ձևով աճող SS ծրագրեր մշակողը (բջջային և վեբ ծրագրեր) Լեհաստանի հարավ-արևելքից, փնտրում է գործակալներ՝ միջազգային համագործակցությունը զարգացնելու համար: Ընկերությունն օգտագործում է ամենավերջին SS շրջանակները և մասնագիտացած է ավտոմատ և խորը ուսուցման տեխնոլոգիաների ոլորտում: Ընկերությունն առաջարկում է իր ծառայություններն ամբողջովին հեռակա ձևով:

Ծածկագիր. BOPL20180820002

Ընկերությունը, որը պատվերով մշակում է համակարգչային ծրագրեր՝ սմարթ մենեջմենթի գործընթացների, արտադրության և ծրագրային ապահովումը 4.0. արդյունաբերության փոխակերպման համար, փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է ընկերության գործընթացին համապատասխան նորարարական տեխնոլոգիաների ծրագրերի մշակման ոլորտում, փնտրում է ներկայացուցիչներ՝ արտերկրում առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Պատվերով լուծումը վերաբերում է այն հաճախորդներին, ովքեր ունեն սարքավորումներն անխափան աշխատելու սպասարկման, 24/7 աջակցության և միջտ ձեռքի տակ գտնվող արագ ծառայությունների լուծումների կարիք:

Ծածկագիր. BOCZ20180802001

Գործարար համագործակցության հարցումներ

Գերմանական ընկերությունը փնտրում է GIS համակարգերի մատակարարներ համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո

Ընկերությունը լուծումներ և խորհրդատվություն տրամադրող գերմանական ընկերություն է, որը մատակարարում է աշխարհագրությանն առնչվող վեբ ենթակառուցվածք, աշխարհագրական տվյալների կառավարում և հրապարակում, ինչպես նաև աշխարհագրական տեղեկատվական համակարգեր: Ընկերությունը փնտրում է GIS համակարգերի մատակարարներ՝ իրենց ծրագրերն իբրև համատեղ ձեռնարկության համաձայնագրի մի մաս ինտեգրելու նպատակով: Ընկերությունը փնտրում է գործընկերներ (ընկերություններ կամ կազմակերպություններ)՝ համատեղ ձեռնարկություն հաստատելու համար:

Ծածկագիր. BRDE20181112001

Կոսմետիկա



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Բնական կոսմետիկա արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որն արտադրում է ասիական բույսերից պատրաստվող բնական կոսմետիկայի հոսքազծեր, փնտրում է դիստրիբյուտորներ արտերկրում: Կոսմետիկան բնական է և չի պարունակում վնասակար քիմիական բաղադրիչներ: Ընկերությունը ցանկանում է ստորագրել տարածման ծառայությունների համաձայնագիր:

Ծածկագիր. BOPL20180911002

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական կոսմետիկայի և օձանելիքների արտադրության ոլորտում, փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական կոսմետիկայի և

օճանելիքների արտադրության ոլորտում և օգտագործում է միայն լավանդայի բնական էթերայուղ, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ՝ առևտրային գործակալության կամ տարածման համաձայնագրերի ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOFR20180928001

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է կոսմետիկայի և խնամքի, էսթետիկայի, բժշկական և սպա կենտրոնների համար նախատեսված սարքավորումների արտադրության և վաճառքի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ

20 տարվա փորձ ունեցող իտալական ընկերությունն արտադրում է սարքավորումներ մարմնի և դեմքի խնամքի համար, նաև՝ բուժման և մազերի հեռացման տեխնոլոգիաներ, նաև իր հաճախորդներին առաջարկում է դասընթացների կուրսեր, սարքավորումների թեստավորում և 360° մարկետինգային աջակցություն: Ընկերությունը փնտրում է պոտենցիալ, որակավորված դիստրիբյուտորներ և գործակալներ՝ տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրեր հաստատելու նպատակով:

Ծածկագիր. BOIT20180607002

Առողջապահություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Լիտվական պայմանագրային արտադրողը, որն արտադրում է սննդային հավելումներ և բժշկական սարքավորումներ, առաջարկում է արտադրական համաձայնագրեր և ենթապայմանագրային համագործակցություն

Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդային հավելումների և ցածր ու ցածր-

միջին ռիսկայնության բժշկական սարքավորումների պայմանագրային արտադրության ոլորտում, փնտրում է օտարերկրյա գործընկերներ և առաջարկում է իր ծառայություններն՝ արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOLT20181029001



Մերբական գիտահետազոտական լաբորատորիան, որն արտադրում է նոր, կիսով չափ պինդ և հեղուկ ֆիտոպրեկտներ՝ ուժեղ հակաբակտերիալ ազդեցությամբ, փնտրում է գործընկերներ

Մերբական հետազոտական և մշակող լաբորատորիան մշակել է նոր, կիսով չափ պինդ և հեղուկ ֆիտոպրեկտներ՝ ուժեղ հակաբակտերիալ ազդեցությամբ՝ հիմնված բնական բաղադրիչների վրա և նախատեսված է տեղային կիրառման համար: Այս հայտնագործությունը կարող է կիրառվել մարդկանց բժշկության և անասնաբուժության մեջ: Ընկերությունը փնտրում է պոտենցիալ լիցենզիոն համաձայնագրեր և/կամ համագործակցություն՝ գյուտը՝ համատեղ ձեռնարկության ներքո մշակելու և առևտրայնացնելու նպատակով:

Ծածկագիր. BORS20170831001

Հորդանանյան դեղագործական խումբը կոսմետիկ բժշկության և դեղագործության արտադրության ոլորտից, փնտրում է տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրեր

Հորդանանյան դեղագործական խումբը, որը հիմնադրվել է 2010 թվականին և մասնագիտացած է բազմաթիվ դեղերի, կոսմետիկայի, բուսական և բժշկական ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ՝ տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOJO20171126001

Գործարար համագործակցության հարցումներ

Հոլանդական ՓՄՁ-ն բժշկական սարքավորումների ոլորտից, փնտրում է բժշկական, վիրահատական, տնային խնամքի սարքավորումների և սպառողական պարագաների արտադրողներ և առաջարկում է առևտրային գործակալության համաձայնագիր

Շուրջ 25 տարի բժշկական սարքավորումների և մարքեթինգի ոլորտում գործող հոլանդական ընկերությունը փնտրում է նոր գործընկերներ՝ իր պորտֆելը բժշկական, վիրահատական, տնային խնամքի սարքավորումների ոլորտում ամբողջական դարձնելու և ընդլայնելու համար: Ընկերությունը ցանկանում է սկսել ինքնատիպ ապրանքների արտադրություն: ՓՄՁ-ն փնտրում է համագործակցություն առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո այս ապրանքներն արտադրող ընկերությունների հետ:

Ծածկագիր. BRNL20181031001

Այլ ոլորտներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը, որը տարբեր նյութերից արտադրում է լազերային կտրմամբ արված և փորագրված ապրանքներ, փնտրում է դիստրիբյուտոր

Անհատ ձեռնարկատերը Սլովենիայից մասնագիտացած է լազերային կտրման և լազերային փորագրության միջոցով տարբեր նյութերից արվող ապրանքների արտադրության ոլորտում: Այն արտադրում է տարբեր ապրանքներ, ներառյալ՝ երեխաների խաղալիքներ, ինտերիերի համար նախատեսված դիզայներական արտադրանք, տոնական դեկորացիաներ, հատուկ միջոցառումների համար նվերներ, հուշանվերներ, անհատական ապրանքներ և այլն: Ընկերությունը ցանկանում է գտնել գործընկեր ԵՄ-ում և դրանից դուրս՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:



Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է ֆիլտրող պոմպերի արտադրության ոլորտում, փնտրում է գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ

Իտալական ՓՄՁ-ն, որը գտնվում է Պյեդմոնտում (Հյուսիսային Իտալիա), 1980-ականներից արտադրում է ֆիլտրի պոմպեր, գալվանական և քիմիական գործընթացների համար: Այն փնտրում է գործակալներ կամ դիստրիբյուտորներ օտարերկրյա շուկաներում:

Ծածկագիր. BOIT20181019001

Ջերմոցների համար նախատեսված գյուղատնտեսական պոլիէթիլենային թաղանթներ արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ընկերությունը, որը գտնվում է Անթալիայում՝ Թուրքիայում, արտադրում է ջերմոցների համար նախատեսված գյուղատնտեսական պոլիէթիլենային թաղանթներ: Ընկերությունը շուկայում է արդեն 34 տարի և կարող է արտադրել հաճախորդի պահանջներին համապատասխան արտադրանք: Ընկերությունը փնտրում է փորձառու դիստրիբյուտորներ՝ իր ապրանքների շարքը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի անդամ-երկրներում վաճառելու նպատակով: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ուժեղ դիստրիբյուտորների հետ՝ առևտրային գործակալության համաձայնագրերի և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOTR20180626001



Գովազդի արտադրության ոլորտում ամբողջական ծառայություններ մատուցող ռումինական մատակարարը փնտրում է ենթապայմանագրային համաձայնագրեր.

Գովազդի արտադրության ոլորտում ամբողջական ծառայություններ մատուցող ռումինական ընկերությունը, որը հաճախորդներին մատուցում է խորհրդատվական, կրեատիվ գովազդման ծառայություններ, փնտրում և առաջարկում է ենթապայմանագրային և

համատեղ արտադրական ծառայություններ: Ընկերությունն ունի հայտնի հաճախորդներ տարբեր ոլորտներից, որոնց առաջարկում է մի շարք ծառայություններ: Ընկերությունը կենտրոնացած է հետևյալ ոլորտներում՝ թույլտվություն, խորհրդատվություն, ստեղծում, գրաֆիկական դիզայն, տեղադրում, նախագծերի կառավարում և տրանսպորտ:

Ծածկագիր. BORO20181022003

Թուրքական ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր

Թուրքական ընկերությունն առաջարկում է բարձրորակ մակնշման մեքենաներ: Դրանք կարող են անել դրոշմակնիքներ երկաթի, ալյումինի, պլաստմասայի և այլ նյութերի վրա : Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ իր շուկան ընդլայնելու նպատակով: Գործընկերոջ աշխարհագրական դիրքը որոշվելու է՝ հաշվի առնելով առաջարկները:

Ծածկագիր. BOTR20180920002

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է ալյումինե կամ պողպատե շրջանակով արտադրանքի արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

Լոնդոնում տեղակայված ընկերությունը Միացյալ Թագավորությունից, փնտրում է արտադրական համաձայնագրեր նոր սայլակով, հատուկ նախագծված գազի բալոնների տեղափոխման համար՝ նախատեսված կենցաղում և հանգստի ժամանակ կիրառության համար:

Ծածկագիր. BRUK20181008001

Հունական ընկերությունը, որը զբաղվում է կահույքի առևտրով, փնտրում է երեխաների կահույք՝ տարածման համար.

Արկադիայում գտնվող հունական ընկերությունը, որը զբաղվում է խոհանոցի կահույքի, մանկական կահույքի, ննջարանի պահարանների արտադրության և առևտրի ոլորտում, փնտրում է առևտրային գործակալության կամ տարածման համաձայնագրեր՝ կահույք արտադրող եվրոպական ընկերությունների շրջանում:


Ծածկագիր. BRGR20181113001

Ինժեներական ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է 17-7 PH պողպատե թիթեղների մատակարարներ.

Ինժեներական ընկերությունը, որը մասնագիտացած է նորարարական էներգիայի մենեջմենթի ոլորտում, փնտրում է ալտերնատիվ պողպատի մատակարար: Ընկերությունը փնտրում է բարդ պարամետրերով պողպատե թիթեղների արտադրող կամ գործարան՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Հիմնական տեխնիկական բնութագրիչներն են՝ 17-7 PH օղակ, լայնությունը՝ 800 մմ, հաստությունը՝ 0.4 մմ:

Ծածկագիր. BRUK20180529001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Նորարարական հակահրդեհային մեթոդ է առաջարկվում լիցենզիոն համաձայնագրի ներքո

Հունական ընկերությունը հայտնագործել է բեկումնային պատենտավորված նյութ, որը հիմնված է փքված պեռլիտի վրա և կարող է կիրառվել իբրև հակահրդեհային միջոց բոլոր տիպի կրակմարիչներով: Նոր ապրանքն ապացուցված է, որ կարող է ցանկացած հակահրդեհային միջոց առավել արագ և հեշտ կիրառելի դարձնել, սահմանափակել ծախսերը՝ համեմատած այլ հրշեջ ռեժիմների հետ, սա միևնույն ժամանակ գործածում է հողի կարգավորիչ, որն օգնում է այրված բուսական աշխարհի վերականգնմանը: Ընկերությունը փնտրում է հակահրդեհային նյութեր արտադրողներ՝ լիցենզիոն համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. TOGR20180927001

Նոր թերապիա դեպրեսիայի և այլ հոգեբանական խանգարումների համար՝ սերատոնինի, վերամշակման և գալանին N-Տերմինալ ֆրագմենտի (1-15) ընտրողական ինհիբիտորի համադրությամբ.

Անդալուզյան համալսարանը Իսպանիայի հարավից, մշակել է ԳԱԼ(1-15)-ի հավաքակազմ՝ սերատոնինի վերամշակված ինհիբիտոր (SRI), որը կարող է բարձրացնել արտազատվող սերատոնինի մակարդակը դեպրեսիայի և այլ՝ անհանգստություն-ագդող-ուտելու-ճանաչողական խանգարումներ բուժման ժամանակ: Համալսարանը փնտրում է դեղագործական ընկերություններ, որոնք ցանկանում են համագործակցել լիցենզիոն կամ այլընտրանքային տեխնիկական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. TOES20180918002

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

ՓՄՁ-ն որոնում է գործընկերներ՝ պղպեղի նվազագույն բերքահավաքի մեքենայի տեխնոլոգիայի համար

Կորեական ՓՄՁ-ն ընկերություն է, որը 2015 թվականից սկսած մշակում է ժամանակակից հարթակ ֆերմայում կատարվող աշխատանքների համար: Քանի որ ընկերությունը մասնագիտացած է գյուղատնտեսության ոլորտում աշխատողների հավաքագրման ոլորտում, այն արդեն ունի գյուղատնտեսական ցանց: Բացի այդ, նրանք ցանկանում են մշակել պղպեղի բերքի մեքենայի տեխնոլոգիա, որը պատշաճ հարմարեցված կլինի համապատասխան պայմաններին: ՓՄՁ-ն փնտրում է գործընկերներ այդ տեխնոլոգիայի մշակման համար՝ լիցենզիոն, որպեսզի համագործակցի հետազոտական և առևտրային համաձայնագրերի ներքո՝ տեխնիկական աջակցությամբ:

Ծածկագիր. TRKR20181024001

Ընկերությունը որոնում է չորացված բաղադրիչների տերևների բաժանման տեխնոլոգիա

Լիտվական ընկերությունը, որն արտադրում է բուժիչ բույսերից դեղեր և մասնագիտացած է բուսական թեյերի արտադրության ոլորտում, փնտրում է առաջադեմ արհեստական ինտելեկտի գործող տեխնոլոգիա, որը կարող է օգնել ընտրելու և առանձնացնելու չորացված բույսերի որակյալ տերևները: Տեխնոլոգիան կարող է սովորել և բարձրացնել գործընթացների արդյունավետությունը, որը ներկայումս շատ ծանր աշխատանք է: Ընկերությունը փնտրում է գործընկեր՝ աշխատելու համար համատեղ ձեռնարկության կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. TRLT20181113001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են և 2019 թ. -ի հունվար, փետրվար, մարտ ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Հունվար

17/01/2019	<p>Cross-industry innovation forum 2019 (Կայուն շինարարություն, արտադրություն, արդյունաբերական ռոբոտատեխնիկա) Բոլզանո (Իտալիա)</p> <p>Այս ֆորումն ուղղված կլինի տեխնոլոգիայի տեսլականի և լուծումների, նոր բիզնես մոդելների վրա: Südtirol-ից և արտասահմանից ժամանած ընկերությունների ելույթներում կներկայացվեն խաչաձև ճյուղային ջանքերի իրենց լավագույն փորձը: Կեսօրին նախատեսված է փորձագետների և ընկերությունների միջև համաժողով, որին կհաջորդի Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում իրականացվող համագործակցության հաստատման միջոցառումը. այն հնարավորություն կտա ընկերություններին հանդիպելու և բանակցելու:</p>
------------	--

Փետրվար

05/02/2019	<p>Rev3days international bookerage event Լիլ (Ֆրանսիա)</p> <p>Միջազգային համագործակցության հաստատման միջոցառում Rev3Days</p>
------------	--

	<p>2019 թվականի փետրվարի 5-6, Ֆրանսիայի Լիլ քաղաքում կկայանա Rev3Days միջազգային համագործակցության հաստատման միջոցառումը:</p> <p>Միջոցառմանը կարող են մասնակցել՝</p> <ul style="list-style-type: none"> -ՓՄՁ-ները և բազմազգ ընկերությունները, -Ինստիտուցիոնալ և մասնավոր գնորդները, -Հետազոտական կենտրոնները և լաբորատորիաները, -Ներդրողներ: <p>Միջոցառումն ուղղված է բիզնեսի զարգացմանը, նոր տեխնոլոգիաների, ներդրումային հնարավորությունների բացահայտմանը և համագործակցության զարգացմանը 4 թեմատիկ ոլորտներում.</p> <ul style="list-style-type: none"> - Վերականգնվող էներգիա, - Տնտեսական մոդելներ, - Կայուն տարածքներ և քաղաքներ, - Ապագայի արդյունաբերություն: <p>https://www.lillegrandpalais.com/ :</p>
13/02/2019	<p>Multisectoral brokerage event at Transfiere 2019 Մալազա</p> <p>(Իսպանիա)</p> <p>Այս միջոցառումը ամենամեծ, պրոֆեսիոնալ և բազմոլորտ միջոցառումն է իսպանական նորարարության ոլորտում, որտեղ մասնակիցները կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Հաստատել B2B հանդիպումներ • Փոխանակվել գիտական և տեխնոլոգիական հետազոտության գիտելիքներով • Ցուցադրել իրենց նորարարական ապրանքները և ծառայությունները • Ծանոթանալ հանրային կառավարման տեխնոլոգիաներին

	<ul style="list-style-type: none"> • Գտնել ֆոնդեր իրենց նորարարական ծրագրերի համար:
21/02/2019	<p>Matchmaking event during the construction fair BATIBOUW 2019 Բրյուսել(Բելգիա)</p> <p>Միջոցառման մասնակից ընկերությունների գործունեության հիմնական ոլորտներն են՝</p> <ul style="list-style-type: none"> -Շինանյութեր -Ջեռուցում և էներգիա -Կայուն ճարտարապետություն -Անշարժ գույքի մենջմենթ -Սմարթ չափող գործիքներ և սմարթ ցանցեր -Բանագանց և արհեստական ինտելեկտ - Առողջ ապրելակերպ: <p>https://b2b-batibouw2019.b2match.io/</p>
26/02/2019	<p>B2B meetings at Mobile World Congress 2019 Բարսելոնա (Իսպանիա)</p> <p>Այս միջոցառումը լավագույն վայրն է վերջին նորարարությունների և առաջատար տեխնոլոգիաների համար: Օգտագործեք այս հնարավորությունը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու, կապեր հաստատելու և արդյունավետ հարաբերություններ ստեղծելու համար, ինչը թույլ կտա իրագործել ձեր ապագա նորարարական հնարավորությունները և բիզնեսում հաջողության հասնել:</p> <p>https://mwc2019.b2match.io/home</p>

Մարտ

06/03/2019	<p>Brokerage event for Industry 4.0 @ Global Industrie in Lyon, France</p> <p>Լիոն (Ֆրանսիա)</p> <p>Այս ֆորումն ուղղված կլինի տեխնոլոգիայի տեսլականի և լուծումների, նոր բիզնես մոդելների վրա: Südtirol-ից և արտասահմանից ժամանած ընկերությունների ելույթներում կներկայացվեն խաչաձև ճյուղային ջանքերի իրենց լավագույն փորձը: Կեսօրին նախատեսված է փորձագետների և ընկերությունների միջև համաժողով, որին կհաջորդի Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում իրականացվող համագործակցության հաստատման միջոցառումը. այն հնարավորություն կտա ընկերություններին հանդիպելու և բանակցելու:</p> <p>https://www.global-industrie.com/en</p>
29/03/2018	<p>B2B meetings at DATE 2019 in Florence Ֆլորենցիա</p> <p>(Իտալիա)</p> <p>Այս միջոցառման հիմնական ոլորտներն են՝ տեխնոլոգա և համակարգեր, վերականգնվող էներգիաներ, ներկառուցվող համակարգեր և ծրագրեր...</p> <p>https://www.tetramax.eu/</p>

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Custom/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: